ԱՐԾԻՒ ԵՒ ԱՐԵՒ

Լերան ծայրէն օր մի Արծիւն այսպէս ասաց Արևուն. (դաղոյն)
—«Ինչու դուն լոյսդ սրփռես ցած, քան զայս սարերս վար.
«Շառագայթներդ կը կեղտոտեն խոտերն անչահ բովանդակ.
«Ի՞նչ է քու գործ. լուսաւորել խոր հովիտներ, նեղ ծլնակ,
«Թող կորսուին ի խաւարի տամուկ մամուռն և ցած սէզ»:
—«Թըռչուն, ասաց Արևն Արծուին, եկ թըռիր դու ետևէս».
Եւ բարձրացան մէկ տեղ երկուքն՝ ամպերէն ևրս շատ վեր.
Մինչ այնքան որ գետնին հաւասար զոյգ եղան բարձրը սարեր։
Երբոր Արծիւն նայեցաւ վերէն վայր,
Լեռ ձոր տեսաւ հաւասարած միատարր,
—«Նայէ, ասաց, Արևն հըպարտ թըռչունին,
«Ցիս, իմ դիմաց լեռն հաւասար է խոտին.
«Հրսկայատես աչքիս առաջ չըկայ ոչ մեծ ոչ փոքրիկ,
«Ովկիանոսն նոյն ինձ համար, ինչպէս կաթիլ մ՚է ջրրիկ.
«Հասարակաց լուսաբեր աստղ եմ ամենուն կենսատու
«Ինչպէս խոտին անտառաբոյս, նոյն և մայրին Լիբանու։
«Ուր ճառագայթքս տաքցընեն մրրկիւն, և կեանք անտառին
«Կու տան, ծաղկանց բուրումն անոյշ կը տարածեն ամէն դին»։

Այսպէս Աստուած, որ ինքն իրեն է միայնակ չափ սահման,
Հասարակաց կու տարածէ վերէն խընամք հայրական։

թարգմ. Հ. ՊԵՐ. Վ. ՊՈՒՇՆԵՐԵԱՆ — ԼԱՄԱՐԴԻՆ

ԱՆՏՐԷՎ ԿԱՐՆԷԳԻ ԵՒ ԿԱՐՆԻՐ ԿԼԱՏՍՊՈՆԻ

Պ. Անտրէվ Կարնէգի Սկոտիայի է, որ պատանեկութեան ատեն երթալով՝ ի Միացեալ Նահանգս, հոն իրեն ճարտարութեամբն և ազդեցութեամբ, միանգամայն օժանդակելով՝ ի բաղդէն, ճարտարարուեստական գործատուն մի հաստատեց՝ որ քսանուհինգ հազար գործաւորաց գործ կը հայցընէ, մինչդեռ նոյն Անտրէվն՝ ի սկզբան անարծամ, աղքատ գործաւոր մ՚էր։— Թէպէտ և միլիոններու տէր եղաւ, բայց երբեք չմոռցաւ իրեն առաջին վիճակը յորում կը գըտնուէր միւս այլ ընկերաց հետ, և ցարդ ևս ոչ միայն առատաձեռն պարգևներ կու տայ հասարակաց հաստատութիւններ կը կանգնէ իւր

digitised by A.R.A.R.@

ատակոմն, այլ և երբեմն երբեմն ճառեր կը խօսի և տեսրներ կը հրատարակէ ընկերական խնդրոց վրայ։ Վերջերս նոր տեսրը մ՚ալ հրատարակեց հարստութեան լաւագոյն կիրառութեան վրայ, որ բիւրաւոր օրինակ տպագրուեցաւ։

Այս տեսրիս առթիւ Կլատսդոն ալ իւր կարծիքն յայտնեց։ Կլատսդոն այնչափ չի վախնար հարստութիւն դիզելէն, որչափ հարստութեան այսօրուան օրս առած կերպարանքէն և դիրքէն։ Վասն զի ատեն մը երկրատիրոջ պարտքերն ու պատասխանատուութիւնն ամենուն ծանօթ և յայտնի էին, իսկ այսօր անոր հակառակն է. որովհետև արժէթղթոց կամ՝ այլ սոյնպիսեաց վրայ հաստատուած է հարստութիւն դիզելն։ Կլատսդոնի հաշուին համեմատ՝ ամբողջ Անգղիոյ բովանդակ տարեկան մուտքն է գրեթէ 1300 միլիոն ստերլին, որ է ըսել 32 միլիարդ և 500 միլիոն ֆրանք. իսկ աղքին դրամագլուխն կ՚ածի տարուէ տարի 200 միլիոն ստերլին, այսինքն 5 միլիարդ ֆրանք։

Կարնէժի թէպէտ հարստութիւն ժողվելու ձգտաներն կ՚ողբայ, բայց կ՚ընդունի միանգամայն թէ օգուտներ ալ ունի և անոր առլին չառնուիր։ Հարստութիւնը մեծատան վրայ ծանր բեռ մի կը դնէ, վասն զի պարտաւորեալ է սա իւր աւելորդներէն բարերարել իրեն նմանեաց։ Իսկ այս երեք կերպով կրնայ ըլլալ. նախ՝ աւելորդը կը-ննայ ժառանգութիւն ձգուիլ ընտանեաց. երկրորդ՝ հասարակաց բարեգործութեան համար կատկուիլ. երրորդ՝ նոյն իսկ հարուստն իւր կենդանութեան ատեն կրնայ զայն անձամբ գործածել բարեգործական իրաց համար։ Կառնէժի այս կերպերէն առաջնոյն շատ չհաւնիր. երկրորդը խստիւ կը դատապարտէ, վասն զի յաճախ, կ՚ըսէ, անոնք մարդկային ունայնամտութեան իբրև յիշատակ կը մնան. և դարձեալ՝ կարելի է ևս խորհրդածել թէ այն անձինք որ այսպիսի կըտակներ կը ձգեն, եթէ կարենային ունեցածնին հետերնին տանիլ, զայն չէին ըներ. ուստի անոնց ըրած պարգևաց մէջ շնորհք կը պակսի։ Վերջապէս երրորդը շատ կը գովէ Կարնէժի, և կ՚ուրախանայ որ տերութեան հարկերն երթալով կ՚ածին մեծատանց ընչից վրայ։ Եւ այս երրորդ կերպով է որ մեծատունք կրնան դարման մ՚ընել մարդկանց հարստութեան ժամանակաւոր անհաւասարութեան, և այնու միաբանեցընել և հաշտեցընել հարուստը և աղքատը 'ի միասին։

Կլատսդոն ընդհանրապէս կը հաւանի Կարնէժիի գաղափարաց. բայց կը յաւելու թէ այս գաղափարներս կրնան յարմար գալ մանաւորապէս միայն մեծամեծ հայրենական ստացուածոց. և դարձեալ՝ թէ շատերը այս գեղեցիկ և սիրուն դրութեան վրայ մեծաւ զարմանքով նայելէն ետքը, կրնան հանգիստ կերպով ըսել թէ այն իրենց համար չէ։— Ուստի Կլատսդոն Կարնէժիի գաղափարաց

digitised by A.R.A.R.@

հաստատութեան համար կը պատմէ, թէ ասկէ քսան և հինգ տարի առաջ 'ի Լոնտրա բարեգործական հաստատութիւն մի կար, և ասոր անդամքն իրենց տարեկան մուտքէն մաս մը հանելով կու տային, միայն անձնական պատուոյ համար, այնպէս որ այս հաստատութեան պահողն և յառաջ վարողն իւրաքանչիւր անդամոց պատիւն էր. և եթէ որ անհաւատարիմ գտնուէր, բաւական կ'ըլլար յիշեցընել անոր իւր տուած խոստմունքը։ Այս ընկերութիւնը, ունենալով հանդերձ այսպիսի լաւ նպատակ մը, չկրցաւ ամիլ բաղմանալ, և թերևս պատճառն այն է, որ անոր անդամ կրնային ըլլալ միայն նորաշան դաւեսարանական եկեղեցւոյ հետևողքն։ Ուստի կլսուրդոն կ'առաջարկէ նոյն տեսակ ուրիշ ընկերութիւն մը հաստատել, որոյ անդամ կարենան ըլլալ ամենայն փափաքողք, թէպէտ և համակարծիք ալ չըլլան իրարու։

Կլատսդոն այսպիսի ընկերութեան մը քաղմաթիւ օգուտներէն միայն հետևեալները կը յիշատակէ։ 1. Իրարու համակարծիք չեղող մարդիկ բարերարութեան համար պիտի գործակցին, և 'ի խտրանաց յառաջ եկող դառն արգասիք ալ պիտի վերնան.— 2. Խնայողութիւն ընել սիրող անձինք ալ պիտի կարենան այս կերպով իրենց պատիւը պահելով խնայողութիւն ընել, մէկդի թողլով ագահութեան հոգին.— 3. Այսու ամենայն դժուարութիւն և նեղութիւն կ'անհետանայ, զորս կ'զգայ ոք շատ անգամ, երբոր կը տեսնէ որ մէկը իրմէ օգնութիւն կը խնդրէ, մինչդեռ ինքը ստակ դիզելու փափաքով լցուեր է։— Կլատսդոն կը յաւելու ևս թէ այս գաղափարներն հրատարակելէն յառաջ, զինքը ապահովցուցեր էին այլք՝ թէ ըստ բաւականի տարածուած է այսպիսի փորձ մը գործադրելու փափաքն, և կ'ըսէ թէ ինքն ալ ըստ ամենայնի պատրաստ է ընդունել և կարգադրել անդամակցիլ փափաքողները։

digitised by A.R.A.R.@